ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» փոխգործակցության մասին համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

2021թ. սեպտեմբերի 28-ին Եվրոպոլի գործադիր տնօրենի և ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» աշխատանքային համաձայնագիրը, որը նպատակ ունի ընդլայնել համագործակցությունն անդրազգային հանցավորության դեմ պայքարում, մասնավորապես՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության, միգրանտների մաքսանենգության, կիբերհանցավորության, ակտիվների վերականգնման, փողերի լվացման, մարդկանց թրաֆիքինգի և այլ ոլորտներում:

Վերոնշյալ աշխատանքային համաձայնագրի շրջանակներում Եվրոպոլի գործադիր տնօրենի և ՀՀ ներքին գործերի նախարարի կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» փոխգործակցության մասին համաձայնագիրը, որը հնարավորություն կընձեռի Եվրոպոլում ունենալ կապի սպա, ում միջոցով անմիջական կապ կհաստատվի ինչպես Եվրոպոլի, այնպես էլ ԵՄ անդամ երկրների Եվրոպոլ գործուղված կապի սպաների հետ: Արդյունքում կապահովվի տեղեկատվության արագ և անվտանգ փոխանակումը, ինչպես նաև Եվրոպոլի և վերջինիս հետ համագործակցող երկրների իրավապահ մարմինների հետ համագործակցության խորացումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» փոխգործակցության մասին համաձայնագրի վավերացումը համարում է նպատակահարմար:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

«21»____02_____2024թ.